# «ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՌՈԴՈՍՈՒՄ

(29 սեպտեմբեր - 2 հոկտեմբեր 2004 թ.)

Ս/թ սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Հունաստանի Հռոդոս կղզում կազմակերպված «Քաղաքակրթությունների երկխոսություն» համագումարին Հայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փնօրինությամբ և օրհնությամբ ներկայացրեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը: Համագումարին մասնակցում էին շուրջ 380 ներկայացուցիչներ աշխարհի 40 երկրներից: Որպես ներկայացուցիչներ հրավիրված էին հայտնի գիտնականներ, քաղաքական, կրոնական և հասարակական գործիչներ, մշակույթի ու արվեստի գործիչներ, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Համագումարը միջազգային բաց երկխոսություն էր՝ նվիրված այն հիմնախնդիրներին, որոնք հուզում են ժամանակակից հանրությանը: Այս համագումարը կազմակերպվել էր 2002 թվականին, որի նպատակն ու առաքելությունն էր՝ միավորել միջազգային հանրության ուժերը՝ մարդկության հոգևոր մշակութային արժեքները պահպանելու համար:

Համագումարի առաջին նիստը տեղի էր ունեցել 2003 թվականի սեպտեմբերի 3-6-ը Հռոդոսում՝ հետևյալ կազմակերպությունների մասնակցությամբ. "Центр национальной славы России" (Ռուսաստան), "Titan Capital Corporation" (Հունաստան), "Kapur Surya Foundation" (Հնդկաստան):

Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ կապված ձեռնարկներում "Центр национальной славы России" կազմակերպությունը սերտ համագործակցում է "Фонд Святого Всехвального апостола Андрея Первозванного" հիմնադրամի հետ, որն ստացել է Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի օրհնությունը, և այս երկու ռուսական կազմակերպություններն ունեն մեկ նախագահ և հանդիսանում են համագումարի գլխավոր կազմակերպիչներից մեկը:

Բացի տարեկան այսպիսի համագումարներից, կազմակերպվում են նաև տեղական միջոցառումներ:

«Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային ծրագրի մասնակիցներ են եղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մուհամմադ Խաթամին, Լիտվայի նախագահ Վալդաս Ադամկուսը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախագահ Կոիչիրո Մացուրան, Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն, Չեխիայի և Հնդկաստանի նախկին վարչապետներ Միլոշ Զեմանը և Ինդեր Կումար Գուջրալը, Ֆրանսիայի Ակադեմիայի մշտական քարտուղար Էլեն Կարրեր դ'Անկոսը և ճանաչված ուրիշ գործիչներ:

Այս տարվա համագումարի թեման էր՝ «Քաղաքակրթությունների երկխոսությունը և ժամանակակից մարտահրավերները», որի մասին ընդհանուր դասախոսություններից հետո չորս բաժանմունքներում թեմատիկ տարբեր հարցեր քննարկվեցին:

Հայր Մուշեղն իր մասնակցությունն է բերել 4-րդ՝ «Կրոնը քաղաքակրթությունների երկխոսությունում» բաժանմունքին, որը հիմնականում նվիրված էր աշխարհը հուզող ահաբեկ-

չությունների խնդիրին, իսլամ և քրիստոնյա հարաբերություններին և դրանց ծայրահեղ դրսևորումներին, աղանդներին և նրանց քայքայիչ գործունեությանը՝ որպես պետական, կրոնական և մշակութային սահմաններ չճանաչող և չընդունող փարթալուծիչ կազմակերպությունների:

Համագումարին ներկա էին նաև Մոսկվայում ԼՂՀ ներկայացուցիչ փիար Ռուբեն Զարգարյանը, Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը և ԱԺ պատգամավոր Սերյոժա Աբրահամյանը:

Հրավիրված էին նաև Ադրբեջանից ներկայացուցիչներ, ովքեր, սակայն, հրաժարվել էին մասնակցել հայերի՝ ի մասնավորի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցչի պատճառով:

Համագումարի մասնակիցները նաև հանդես եկան հայտարարությամբ:

## *«ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ*

*(Հռոդոս, 2004 թ.)*

*«Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային հասարակական համաժողովի երկրորդ հանդիպումը, որ տեղի ունեցավ Հունաստանի Հռոդոս կղզում 2004 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը, ի մի բերեց մի քանի հարյուր մտավորականների, գիտնականների և հասարակական ու արհեստակցական միությունների գործիչների, տարբեր կրոնների ներկայացուցիչների, զանգվածային լրատվամիջոցների և ավելի քան 40 երկրների գործարար դեկավարների:*

*Մեր օրերում, երբ բնորոշ է բռնության տարածումը, երբ չափից ավելի շատ են արծարծվում պատերազմների, քան խաղաղության և արդարության թեմաները, համաժողովը վերստին հաստատում է իր պարտավորությունները քաղաքակրթությունների միջև տեղի ունեցող երկխոսության նկատմամբ, որը հակազդում է քաղաքակրթությունների բախման սպառնալիքին:*

*Երկխոսությունն ընդունում է տարբեր մշակույթների և մարդկային անհատների արժանապատվությունը, անկախությունն ու ամբողջականությունը և դեմ է հեգեմոն գերիշխանության և մշակութային համահավասարեցման բոլոր դրսևորումներին:*

*Երկխոսությունը ճանաչում է տարբեր կրոնների և մշակութային ավանդույթների արժանիքները՝ դատապարտելով այդ արժեքների շահագործումը իշխանության կամ քաղաքական նպատակների հասնելու միտումով:*

*Այս պարտավորություններն ուժեղացնելու ջանքերում համաժողովն իր ուշադրությունը կենտրոնացնում է հետևյալ թեմաների վրա. գլոբալիզացիա և աշխարհում կարգ ու կանոնի՝ մարդասիրական գլոբալ կարգավորման անհրաժեշտություն, մշակույթ և միանմանություն համաշխարհային քաղաքականության*

*մեջ, նոր սերունդն արժեքների որոնումներում և կրոնների դերը քաղաքակրթությունների երկխոսության մեջ:*

*Գլոբալիզացիայի մասին քննարկումներում համաժողովն իր ուշադրությունը կենտրոնացրեց գլոբալ կարգավորման ժողովրդավարական և բազմակի ձևերի անհրաժեշտության վրա՝ որպես հակակշիռ միակողմանի գերիշխանությանը և շուկայական ուժերի պարտադրյին կանոններին:*

*Մշակույթի և միանմանության մասին քննարկումներում մասնակիցները կարևորեցին և՛ մշակութային ավանդույթների ամբողջականության ու բազմազանության պահպանությունը, և՛ ծայրահեղականության դրսևորումների ու զինված բախումների կանխումը:*

*Նոր սերունդների՝ արժեքների որոնումների մասին խոսելիս համաժողովի մասնակիցներն անհրաժեշտ համարեցին վերացնել ավանդույթների և արդիականության միջև եղած բացը և խրախուսել երկխոսությունը սերունդների միջև:*

*Քաղաքակրթությունների երկխոսության մեջ կրոնների դերի մասին քննարկումները կենտրոնացան միջկրոնական հանդիպումների կազմակերպման և միջկրոնական երկխոսությունների զարգացմանը նպաստելու անհրաժեշտության վրա:*

*Համաժողովի մասնակիցները կարծում են, որ, ձգտելով իրականացնել այդ նպատակները, մենք կարող ենք նպաստել այն դրական ներդրմանը, որ հասարակական կազմակերպությունները կարող են ունենալ աշխարհի խաղաղության և առաջընթացի հարցում:*

*Համաժողովի մասնակիցները նաև ընդունում են լայնամասշտաբ թևեկապվածություն ապահովելու անհրաժեշտությունը՝ քաղաքակրթությունների երկխոսության գաղափարների տարածման և գործող քաղաքական համակարգերի վրա ազդեցություն գործադրելու հարցում՝ արժևորելու համար երկխոսությունը որպես հակակշիռ հեգեմոն ձգտումներին և տհաբեկչությանը:*

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*